ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

16 ապրիլի 2026թ. թիվ 392

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ՏԱՇԻՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանի 2026 թվականի ապրիլի 16-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին ս/թ ապրիլի 16-ին մեկ օրով գործուղել Տաշիր բնակավայր՝ շինարարական աշխատանքները դիտարկելու համար:

2. Գործուղումն իրականացնել «ВАЗ 21154, 2012 թ.» մակնիշի 610 CP 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

4/16/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. ապրիլի 16
ք.Վանաձոր